

ցնեն թէ վանքը կամաց կամաց կզիմէ դէպի իւր նպատակը:

Ս. Հայր Արիստակէս՝ սուրբ Էջմիածին աւարտուած գիտութիւնը ստանալէն յետ, Գերապատիւ Եղիազար Արք Եպիսկոպոսի պաշտպանութեամբ և օյնութեամբ իւր ուսումը առաջ տարած է երբեմն Մոսկով, երբեմն ալ Պոստանդուպօլիս: Նա զարդիս պատրաստի ունի մի քանի աշխատութիւններ, որոնց ցանկը երբեմն հրատարակեց «Հայկական Աշխարհը», որոնց սեւերես աղքատութեան առիթով գուցէ չէ տպիչ տպիչ:

Վեհափառ Հօր քաջալերութեամբ և պաշտպանութեամբ այժմ վանքին մէջ կայ մի դպրոց, ուր կուսանին երեսնի չափ երեխէք, որոնք վանքին խիստ մօտ եղած գիւղերէն են հաւաքուած: Աշակերտք բոլորն ալ երթեակ են, որ կզիշերեն վանքին առաջ եղած գիւղումը: Հետու գիւղերէն եկածներն մօտիկ գիւղի իրանց բարեկամների տնուումն կկենան:

Աշակերտների ուսման վարձն այնքան քիչ է, որ կարելի է ասել թէ անվարձ են. ըստ որում տարեկան երեք րուբլի է նշանակուած:

Գրա կտրվին Հայի լեզու, կրօն և պատմութիւն, մասնաւորապէս Ռուսաց և Պարսից լեզուներ: Թուարանութիւն, եկեղեցական երգեցողութիւն և վայելչագրութիւն:

Աւսուցիչք են սուրբ Հայրը ինքը, սուրբ Էջմիածինէն զրկուած մի սարկաւազ, մի այլ Սարգիս անունով պարոն, և մի ալ Պարսիկ ասունդ որ շարժական երեք դաս ունի:

Աւսումնարանը երկու դասատուէն կրողկանայ, մէկին մէջ 18, իսկ միւսին մէջ 12 աշակերտք կան: Մի քանի որ վանքին հիւր ըլլալով շարունակ գրեթէ զպրոց և եկեղեցին գնացի, դպրոցին մէջ եղած կարգը կանոնը բաւականին օրինաւոր գտայ: Երեխանց մէջ զարթնած տեսայ սէր դէպի ուսումը, դէպի եկեղեցին և դէպի սուրբ Էջմիածին:

Վեհափառ Հօր պատկերը դասատան ճակատին բազմած էր, երեխի մը հարցրի, եղբայր այդ ու՛մ պատկերն է գիտես: Մեր Վաթողիկոսի, պատասխանեց երեխան: Ա՛յլ է այդ՝ վերաբերի ես. այս ուսումնարանի բացողը չես գիտար, ասաց երեխան: Նա մեր ինչն է, կրկին հարցրի ես: Հայրերնիս, պատասխանեց երեխան: Մենք նորան համար միշտ ազօժք ենք անում, կրկնեց մէկ ուրիշը:

Չմոռնանք ասել թէ՛ աշակերտաց ժամերգութիւնը եկեղեցոյ մէջ այնքան կարգին և օրինաւոր էր՝ երգեցողութիւնը այնքան ներդաշնակ և շքեղ էր՝ որ սիրտս հազար և մի սուրբ զգացմունքներով լեցրին, մտացս մէջ բիւրաւոր յիշատակներ կծփար, նախնեաց կենաց պիւքներուն մէջ վերացած կշռէի. զգացմունքս տակնուվրայ կլինէին այն սուրբ տաճարին մէջ մանուկների համաձայն Հայաստանեայց սուրբ եկեղեցոյ կարգից, կանոնից, ծէսից և արարողութեանց աճիւրդ

և զարգանալը աչքիս առաջն ունենալով: Միտքս կգային ականայ այն սուրբ վարդապետները, որոնք երբեմն այդ և այլ սուրբ տաճարների մէջ իւրեանց բոլոր կեանքը այդ սուրբ պաշտօնին էին նուիրած:

Այն երանի թէ ընդհանրապէս մենք շատ շուտ հասկանայինք և զգայինք թէ վանքերի իրանց նպատակներնուն ուղիղ կերպով ծառայելը մեզ համար որքան բարձր և թանկ և վսեմ է:

Ես մաղթելով Գ. արդի վանահօր առողջութիւն, բարիք և յաջողութիւն կվերջացնեմ իմ [սոսակցութիւնս *]:

Յակոբ Գ. Վարդապետ

1874 Յուլի:

Ի Շուշի:

ՍՈՒՐՀԱՆԳԱԿԲ ԲԻՒԶԱՆԳԵԱՆ

ՀՆՈՒԹԻՒՆՔ Ի ՏԱՐՈՆ.

– Ասկէց քանի մը տարի առաջ Տարսնի ազգայինք իրենց հին փայտաշէն եկեղեցին նորոգելու և կէս քարաշէն կանգնելու համար՝ երբ եկեղեցոյ հիմերը կրանան, եկեղեցոյ խորանին հիման մէջէն երկաթ մնտուկ մը կկնէ. որոյ մէջ Աւոն թագաւորի ադամանդեայ ոսկեղէն թագը, գօտին (քէմեր), արքունական դաւաղանը, մարգարտազարդ հողաթափը, ականակուռ ոսկի թեւնոցը, պարանոցին ոսկի շղթայն՝ որ թագաւորական պատկերը կկրէ, և շատ մը հին ոսկի դրամներ, որոց վերայ մարգարտաճաղիկներ բանուած են. թագին, գաւաղանին, գօտիին, թեւնոցին վրայ ալ պատկերներ և առիւծներ քանդակուած ու մեկմէկ խոշոր ազամանդներ զրուած են վրանին:

Այս դրամներն ալ ըստ վկայութեան զաղղիացի հնագիտի մը խիստ յարգի և ուրիշ հնութիւններէ աւելի զերազանց ըլլալը ծանուցեր է որ նոր հին ատենները ալ նախնի հայ թագաւորական գանձատուները իբրև հնութիւն կպահուին եղեր:

Այս բոլոր անվին հնութիւնները մայրաքաղաքիս մէջ ծախուեր, ոմանք Վեսարացի և ոմանք Զմիւռնիացի երեւելի ազգայինք աւեր են:

(*) Այս վանքէն մի ժամուայ հեռաւորութեան վերայ կզմուռի կապոյտ բերդը, որին մէջ զժրախա Բաղրատունի Սմբատը ամրացաւ Զուսուփի դէմ: Ես այս բերդին այցելու գնացի, որուն աւերակները մինչև ոչսօր կան եւ կմնան. ե՛թէ ինձ կը յաջողի այս մասին, ուրիշ անգամ կխօսեմ:

Սոյն հետաքրքրական պատմութիւնը մանրամասնաբար ուրիշ առթիւ պիտի հրատարակեմք թէ ի՞նչ գնով և ի՞նչ միջոցաւ վաճառեր են անդին հնութիւնք:

Այս առթիւ պարտք կհամարեմք ծանուցանել Հայրենիքի 53 թուով հրատարակած Լեւոն Զի սուրն ալ. որ Յակոբ Պատրիարքի օրով և զիտութեամբ Աննտիկի միաբանութեան ծախուեր է:

Յիշեալ սոյն նկարագրութիւնը որ մեծապատիւ Ազգարոս պատուելի Աւսանեան մեզ զրկած էր, Մ. Գասպարեան Պ. Յակոբին գծագրութեամբբը, որ սխալմամբ Սերովբէ աղայէ գծագրուած հրատարակած էինք:

Հայրենիք. Թ: 60

Ա Ն Ի

Անի քաղաքը որ անբրակ էր մինչ ցարդ և որու շէնցուիլն քանիցս խնդրուած էր հայրենասէր ազգայնոց կողմէն, ցաւ ի սիրտ կիմանամք թէ այս անգամ Խաթուն օղլու անուն Մահմետականին ի՞նչ եղած է:

Միթէ Հայերուն համար էր արգելքը և Մահմետականաց համար չէր. ո՞ր կը մնայ ուրեմն հաւասարութեան սկզբունքը որ տէրութեան հանդիսաւոր կերպով քարոզած սկզբունքն է:

Օրապիւր, Թ. 540

ՍՈՒՐԲ ՏԵՂԵԱՅ ԽՆԴԻՐ

(Ե. Ինչն ճանորդը)

Իսկ Հիճրէթի 15 թուականին երբ Եփր Եփրաթի Էօմէր Խաթապ յաղթանակաւ Երուսաղէմ քաղաքը կը մտնայ, Հայոց միաբանութիւնը Հալէպէն Մէհմէթի տուած հարկէն ձեռքը առած կը ներկայանայ Էօմէրին, որ նա կարգալով և ընդունելով, մի և նոյն մտքին համեմատ ինքն ալ կը զրէ հարկէ մի, որուն մէջ կը թուէ զարձեալ Հայոց ազգին ձեռքը եղած եկեղեցիքը և վանքերը, և Ս. Յակոբայ վանքը՝ Պատրիարքին և միաբանութեան նստելու տեղ և Հայոց ազգին սեպհական, զորս ոչ որ իրաւունք ունի միջամտելու կամ յափշտակելու և այլն . . . Հայոց միաբանութեան կյանքն է: Ասոնց նման է Հալէպէն տուած ահմամէն: Ապա Հիճրէթի 583 թուականին, երբ Եգիպտոսի Մէլիք Եուսուֆ Սալահէտտին Երուսաղէմ քաղաքը զինու զօրութեամբ կառնու և ներս մը մտնայ, Հայոց միաբանութիւնը իւր հպատակութիւնը յայտնելու համար կը ներկայանայ Մէլիքին՝ իւր ձեռքը ունենալով Մէհմէթտին Էօմէրին և Ալիին ահմամէնները: Մէլիքը զանոնք կարգալով

կընդունի և կը հնազանդի. և Հայ կղերին ազանաց լսելով, ինքն ալ անոնց հետ ուխտ և դաշխք կընէ, և յիշեալ ահմամէններուն մտաց համեմատ ահմամէ մի կը շնորհէ ի լեզու արարացոց, որ այսպէս կսկսի. «Յանուն ողորմածին և զթածին Աստուծոյ: Այս գիր է Եյուսպի որդի յաղթող Մէլիք Եուսուֆ Սալահէտտինի, Գրեցի ուխտի և դաշանց զիրս քրիստոնեայ Հայոց ազգին: Երբ Աստուծոյ ամենակարող զօրութեամբ Երուսաղէմ քաղաքը առի ամսոյս եօթին և Հիճրէթի 582 թուականին, ինձ ներկայացան Հայոց ազգի միաբանները իրենց զխաւորներով, ձեռքերին Հազրէթի Մէհմէթտին Էօմէրին և Ալիին ահմամէնները ունենալով, ընդունեցինք և հնազանդեցանք ինչ որ Հայոց ազգին շնորհք յրած էին. և իրենց ձեռքը եղածին համեմատ ինձմէ ալ խնդրեցին, և ես իմ հաճութեամբս շնորհեցի անոնց, որ իրենց անունին Ս. Յակոբ վանքին մէջ նստին և ձեռքերնին եղած սեպհական եկեղեցիքը Ս. Յարութեան Գողգոթան,*) կանխեցնեցրը, աշտանակները և խնկելը և ուրիշ սեղանները, քաղաքէն դուրս և ներս եղած ուխտատեղիքը, Սուրբ Յովհաննէս եկեղեցին, Ս. Հրեշտակապետ և Ս. Փրկիչ, Սիոնի գերեզմանատունը, Բեթլէհէմ և Աստուածածնի գերեզմանը և Նապուլուս և այլն . . . քրիստոնեայ ազգաց և ոչ մէկը իրաւունք ունի ասոնց միջամտելու, և ոչ Ս. Յակոբ անունին վանքին և ոչ ուրիշ ուխտատեղեաց. ինչպէս որ այս շնորհքները ինձմէ առաջ եկողները Հայոց ազգին տուեր են, ես ալ նոյնը կը շնորհեմ և այլն: Հայք այս արտօնութեամբք իրենց իրաւունքը շարունակ կը պաշտպանեն մինչև Սուլթան Սելիմ առաջին Եսփուղ կոչեցեալ, որ երբ 923 հիճրէթի թուին Երուսաղէմն առաւ, զարձեալ Հայոց Սարգիս Պատրիարքը իւր միաբանութեամբ ներկայացաւ Սուլթան Սելիմին, և խնդրեց որ Հայոց ազգին սեպհական իրաւունքները ըստ առաջին կերպի հաստատուն մնան: Թագաւորը Հայոց Պատրիարքին ձեռքը եղած ահմամէնները կարգալով, ինքն ալ կը շնորհէ անոնց Նշանի Հիւմայուն Մուզարրէրնամէ հրովարտակը, և Տէֆտէր Խազանի Սիւրէթը, որուն մէջ յիշուած արտօնութիւնները և իրաւունքները ինքն ալ նոյն հրովարտակով կհաստատէ և Հայոց ազգին կը շնորհէ:

Ապա 964 հիճրէթի թուականին Երուսաղէմի Անդրէաս Պատրիարքն Պօլիս գալով աղերսագիր կմատուցանէ Սուլթան Սիւլէյման առաջին Գանունի կոչեցեալ թագաւորին ներկայացնելով իւր հօր Սուլթան Սելիմին տուած հրովարտակը, որ նա ևս նոյն հրովարտակին մտօք նոր հրովարտակ

(*) Սոյն սրբալայրը յափշտակեցին Վրացիք Հայոց ձեռքէն 1440ին, յորոցմէ ալ Յոյնք ևս կէսն ալ լատինք:

կուտայ Հայոց ազգին սեպհական իրաւունքները հաստատուն պահելու: Աւելորդ կը սեպենք հրովարտակին թարգմանութիւնը գնել միայն քանի մը խօսքերը կը կրկնենք: «ԱէճՃ մէջուհ խզրէ էլէրինտէ օլան ահանամէի հիւմայուն վէ սէլա-թիմի մազի յետէն վէրիլէն ալամիրի շէրիֆէլէրի, վէ մերհում վէ մազֆուր լէհէ պապամ» (Սուլթան Սէլիմ Խան թապ սէրահ հազրէթ լէրի-նին մուգարէրնամէի հիւմայուն մա' տէլէթ մաք-րուն իլէ մանան վէ սիւրէթի տէֆտեր խազանի, վէ պատէ վէրիլէն նշանի հիւմայուն Սաստէթ մաքրունիմ իլէ, մուգարէրնամէլէրի մուլճիլինճ է ամէլ օրւնուպ, մին պատտ պիր ֆէրտ միւտա-խէլէ. . . .) Ար թողունք Օսմանեան պետութեան այլևայլ ժամանակներու թագաւորաց տուած հը-րովարտակները, որոց բոլորին մէջ ալ Հայոց սեպհական իրաւունքները յիշուած և հաստա-տուած են, միայն Ս. Երուսաղէմի Պատրիարքաց հրովարտակին քանի մի խօսքը կը գնենք իրր կնիք բոլորին: «Աէ գատիմտէն Գուտուս շէրիֆ փաթրիզի օլանյարըն սէլաթիմի մազի յետէն էլ-լէրինէ վէրիլէն ալամիրի շէրիֆէ մուլճիլինճ է գապթ վէ թասարու ֆէրիմտէ օլան. . . .) Ահա այսքան դարերէ ի վեր, այսչափ հրովարտակնե-րով և ահանամէներով Հայոց ազգը իւր իրա-ւունքը հաստատուն պահած է, և այսօր հարկ եղած տեղը կրնայ ներկայացնել. ուստի այս ի-րաւանց օտար մը երբէք իրաւունք չունի միջա-մտելու: Լատին կղերը կը զիջանի այս քրիստո-նէական շնորհքը դարձեալ չզլանալ: Իսկ այսօր Հայոց ազգը լաւ գիտնալով որ այսպիսի շնոր-հումներէ քանի քանի վնասներու հանդիպեր և որքան կորուստներ ըրած է, վանորոյ չուզեր փորձեալը կրկին փորձել: Հարկ կ'սեպենք այս տեղ Հայոց ազգին Լատինաց լրած քրիստոնէ-ական սէրը և անոնցմէ ընդունած փոխադարձ վնասները համառօտակի ծանուցանել. աւելի հե-ռու շերթայով միայն մօտ ատեն Երուսաղէմի սահմանին մէջ եղածները կ'ըլինք: Լատինք՝ Հայոց ըրած մարդասէր հիւրընկալութեան ինչ փոխանակեցին արգեօք. երբ արաբացիք իրենց Սիոն վերնատան վանքէն զիրենք արտաքսեցին, երկար ատեն աստանդական թափառելով աս-պնջական մի չկարացին գտնել Երուսաղէմի մէջ. Հայոց մարդասիրութեան ազաւինելով միաբա-նութեան և Պոստանդուպօլսոյ ազգայնոց աղա-չեցին, և միաբանութիւնը ասոնց թախանձանաց զիջանելով սիրով հիւրընկալեց զիրենք. Հրեշտա-կայետի վանքը եկեղեցին և սենեակները անոնց պիտոյիցը յատկացան, և երկար միջոց հանգիստ նստելէն վերջը արգեօք միաբանութիւնը ինչ դժ-ուարութեամբ և ինչ վնասներով և որքան աշ-խատութեամբ կարաց դուրս հանել զանոնք նոյն վանքէն. նոյն ատենուան պահուած թղթերը իրր և կենդանի վկայ կրնան վկայել թէ մարդա-սէր հիւրընկալութիւնն ինչ դարձեր է, և Լա-

տին կղերը փոխանակ ինչ շարիքներ չէ հասու-ցեր: 1790) թուականին երբ Նապօլէոն Ե. Պա-ղեստինայ սահմանները ոտք կոխեց, Յուպէ, յու Հայոց վանքը զօրաց հիւանդանոց և մէկ տունը իրեն նստելու տեղ յատկացուց. նոյն ժամանա-կին Ս. Եթողոյն գահակալ Եւզոկիացի Պետրոս Պատրիարքը, այս ցաւերուն դարման մը գտնելու մտօք Յուպէ կ'հասնի, և հոն իւր սրտին ցա-ւէն կ'վախճանի. ասոր ապացոյց է որ մինչև ցայսօր Եւրոպացի ճանապարհորդք Յուպէ, յու Հայոց վանքին մարմարոնեայ սեան այցելութիւն կընեն, թէ մեծն Նապօլէոն անդ նստեր է. այդ Հայոց ազգը այն զրկողութեանց սիրով տարաւ նոյն միջոցին. երանի թէ ասով միայն ազատէր և ուրիշները չբարդուէին վերան, բայց դու տես թշուառութիւնը, երբ Պոնաբարթեան իշխանու-թիւնը վերջացաւ Պաղեստինայ երկրէն. Հայոց ազգը իր մարդասիրութեան փոխարէն ինչ բա-րիք և ինչ երախտիք տեսաւ. մարդ կը քսամի լսել, ուրիշ բան չէ, եթէ ոչ Հայոց ազգին սեպհական վանուց բանայինները Լատին կղերին յանձնեց, իր թէ անոնցմէ առած ըլլար:

Հայոց միաբանութիւնը երկար միջոց տառա-պեցաւ և աշխատեցաւ այս սիրով կորսնցուցած իւր արդար իրաւունքը ձեռք բերելու. և Լատին կղերին ձեռքէն վանքին բանայինները թափելու: Այս գործին համար եղած գրութիւնները և եկած հրամանագրերը Ս. Եթողոյն դիւանին մէջ ցարդ կ'պահուին իրր կենդանի վկայ: Գրեգոր շղթայա-կիր Պատրիարքի օրով, Լատին կղերը Ս. Յարութեան տաճարին մէջ աւելածութեան պատճա-ռաւ Հայ միաբանին մէկը ծեծի տակ կ'մեղցնեն, և օր քան զօր ատոնց ատելութիւնը կրկնա-պատկելով անտանելի կ'ըլլայ: Պատրիարքը կը-սարպուի Լատին կղերին անկարգ ընթացից վրա-յօք բողոք բառնալ, երեք դիր գրել, որոց մէկն առ Ս. Պապն Հռոմայ, մէկը Գաղղից արտաքին գործոց պաշտօնէին, իսկ միւսը Պօլսոյ Գաղղից դեսպանին, ուր դառն գանդատներով կը յայտնէ քրիստոնէական սիրոյ դէմ Լատին կղերին ըրած ռիսերիմ թշնամութիւնները: 1779 և հիւրէթի 1192 թուականին, Լատին կղերը Երուսաղէմի Հայոց գերեզմանատան մէկ մասը բռնութեամբ յափշտակելով կ'իրացնեն Օսմանեան բարիեմամ տէրութիւնը խարել ջանալով թէ Հայք 23 տա-րի յառաջ այս տեղը մեզմէ յափշտակեր են այն ժամանակին Յովակիմ Պատրիարքը և Պօլսոյ Պատրիարքը այս անիրաւութիւնները և բռնու-թիւնները տեսնելով, իրենց թագրերնորով կ'ողոճ-քեն առ Բարձրագոյն Գուռը. նոյն իսկ Յովակիմ Պատրիարքին առ ազգը գրած գրոյն օրինակը կե-ցած է, և այս գործին նկարագրութիւնը տէրու-թեան կողմէ տրուած հրովարտակին մէջ կը տես-նուի. «Թէ Երուսաղէմի Լատին փոխանորդը՝ դատաւորը իր կողմը յանկուցանելով, գերեզմա-նատունը գտնուած Հայ և Ցածիկները սաստիկ

ծեծել տալով շատերը վիրաւորել են, շատերը շղթայակապ բանտարկել տուեր, Հայ կղերը մեծամեծ տուգանքներու հանդիպուցել են. և երբ նոյն գերեզմանատան կողքը յափշտակելու որոշում կըլլայ, Հայոց հին և նոր ննջեցեայնները դուրս կը հանեն կը ձգեն ի նախատինս Հայոց ապրին, մանաւանդ թէ քրիստոնէութեան, և անմիջապէս գերեզմանատան բոլորտիքը փոքր պատ մի կը քաշեն: Տէրութիւնը անմիջապէս հրաման կընէ Վամաստիսի Ալպիին երթալ գործը քննել:

Բեթլեհեմի եկեղեցւոյ Լատինաց զուռը Այս զուռը բացուած է եկեղեցւոյ հիւսիսային կողմը, որուն դէպ ի Այրը երթալու ճանապարհը Հայոց եկեղեցւոյն մէջէն կանցնի:

Այս զուռը՝ որ Հայոց եկեղեցին ոտնակոխ ըրած է, անգամ մը Օսմանեան պետութեան հրովարտակալ գոցուեցաւ ի պատրիարքութեան Թէոֆորոսի, և եօթը տարի փակուած մնաց, յետոյ Եւրոպացւոց միջամտութեամբ Եգիպտական կառավարութեան մէկ հրամանագրով Լատինք բանալ տուին զարձեալ. այս գործողութեան նախկին Պատրիարք Աղրիանուպօլսեցի Պօղոս եպիսկոպոսը ներկայ էր. Հայոց եկեղեցին աւելի քան զառաջինն սկսաւ ոտնակոխ ըլլալ, եկեղեցականք և ժողովուրդք արհամարհելի վերջապէս Հայոց երկու վարդապետներ նոյն եկեղեցւոյ մէջ Լատին կղերէն դարձուելով կը մեռնին, որոնց տարապարտ մահուան վրայ եղած քննութեան հէօձէթը կեցած է: Ասոր վերայ Հայք կը բողոքեն և Օսմանեան բարեխնամ կառավարութիւնը 1251 — և 55 թուականներուն նորէն հրովարտակներ կուտայ նոյն զուռը գոցելու, Հայոց իրաւունքը ոտնակոխ չընելու համար: Բայց այս արքունական հրամանը գործադրելն անհնարին կըլլայ և մինչև ցայսօր զուռը բաց և ճանապարհը կը շարունակուի: Իսկ 1860 թուականին, Հայք մեր ճանապարհին վերայ սիւսոց փոխել են ըսելով, սրօք և բրօք յարձակեցան Լատինք, սիւսոցը իրենց ուզածին պէս կտրեցին, այն նուիրական տեղը պատերազմի դաշտի փոխեցին, և եկեղեցւոյ մարմարոնեայ յատակը Հայոց արեամբը ներկեցին, սեղանի զարդերը աշտանակները և ջահերը անարգելով խորտակեցին, Հայք երբ այս անիրաւ զբրկողութեանց վերայ բողոքեցին և իրաւունք պահանջեցին, Վաղղիոյ հիւսպատոսը կանգնեցաւ փոխանակ Լատին կղերին, Վաղղիոյ կամբը այս է և այսպէս պէտք է ըսելով պնդեց. Հայք զարձեալ իրաւունքը զոչեցին, և անցուարձի ճանապարհը, Լատին կղերը և Վաղղիոյ հիւսպատոսը իրենց կամացը համեմատ տնօրինեցին Սիւրէա փաշան այս եղելութեանց ականատես է: 1866 թուին Լատինք զարձեալ գերեզմանատան և Բեթլեհեմի քառանկից այրի խնդիրը յուզեցին. ասոնց դատը երկար միջոց տեսց, Լատինք ուզեցին Հայոց գերեզմանատան կից պարտէզին մէկ մասը իրենց գերեզմանատան խառնել, որուն համար հիւսպատոսը

զարձեալ միջամտեցին, և Եսայի Ս. Պատրիարքը շատ մը թախանձեցին. երբ տեսան որ ընդհանուր ազգի մի իրաւունք անկարելի է Լատինաց շղթաքորթութեան զօհել, Լատինք իրենց գերեզմանատան չորս կողմը պատեցին, և երկու դուռ Հայոց գերեզմանատան վերայ բացին ի նախատինս Հայոց, մինչդեռ արքունական պողոտայի վերայ դուռ բանալու տեղ ունէին. այս արդարութիւնը և իրաւունքը, որ իրբև արեգակ կը փայլի, տեսնողները վկայեցին և կը վկայեն. այդ ի՞նչ օգուտ իրաւունքը զօրաւորին է, և Վաղղիոյ կամբը այս է ըսելէն ետ չը կեցան, դռները այնպէս մնացին և գերեզմանատունը ոտնակոխ ըրին, նոյնպէս Վաթին այրի խնդիրն ալ թերի մնաց. թողունք Համբարձման տեղոյն Հայոց արքունական հրովարտակով նոր շինել տուած սենեակները հիմնայատակ քակիլ սեղանների կործանել զոները և արձանագրութիւնները խորտակել, եկեղեցական զարդերը յափշտակել, որով այն քարուկիր հոյակապ շէնքը մէկ օրուան մէջ հիմն արեւին տապալեցին. թողունք Գեթեմանի ձորոյն աղօթատեղին յափշտակելը, Բեթլեհեմի Քրիստոսի ծնած տեղը հրդեհելը, Հայոց եօթը պատկերները այրելը կառավարութեան միջոցաւ տեղերը դրուելէն վերջը, Լատինաց վերատին գողնալը, որ մինչև ցարդ նոյն պատկերներն իրենց տեղը չդրուեցան: Ահա այս է Լատին կղերին Ս. տեղեաց մէջ վարմունքը, այս է անոր քրիստոնէական և եղբայրական սէրը, ի՞նչ կարելի է այսպիսի մարդկանցմէ փոխադարձ սէր յուսալ որ միշտ կը ձգնին ատելութեան ոգւով վառուած այլոց իրաւանց վերայ բռնանալ. ասոնց համար է որ Հայք Լատին կղերը իրենց եկեղեցին չեն ընդունիր և իրենց սեպհական իրաւունքը զօհ չեն ըներ, փորձով տեսնալով և գիտնալով այսքան եղած վնասները. ահա յայտնապէս այսքան խօսքերէն և դէպքերէն կը տեսնուի թէ Հայք միշտ իրենց բարեմտութեամբը մեծամեծ վնասներու հանդիպած են. փոխանակ եղբայրութեան՝ ատելութիւն. ի վերջոյ աւելցաւ ասոնց վերայ Վաղղիոյ կամբն ալ:

Մասիս Թ. 1417-18, յուլ. 24, 27:

— Մեծապատիւ ազգասէր Պօղոս էֆէնտի Վարապետեան, որ քանի տարիէ հետէ Եգիպտոսէն Ալըիոյ ազգային վարժարանաց համար 200 ոսկի յատկացուցած է որ ցարդ կը շարունակէ, և անով զպրոցաց պէտքերն ու վարժապետաց ամսականները կհոգացուին, իրենց սրտազին շնորհակալութիւնը Հայրենեօք կը նուիրեն Մեծ. Բարեբարին:

— Նոյնպէս նաև Եգիպտոս ընակող Էրթ. Տ. Միքայէլ Ծ. վարդապետ, որ Փրընըզլի ազգային վարժարանի տարին 12 հատ Օսմանեան լիւրայ յատկացուցած է, Փրընըզլի ազգայինք իրենց շնորհակալութիւնը կ'այտնեն, Տար Երկինք որ այսպիսի բարերարաց թիւը օր քան զօր բազմանար:

Հայրենիք Թ. 71: